

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



105 տարիներ առաջ, Մայիս 28-ին, Ցեղասպանության սուսկալի հարուածէն ետք, հոգեվարքի եզրին գտնուող հայ ժողովուրդը վճռեց վերապրիլ եւ խոյացաւ դէպի անհաւասար, սրբազան պատերազմ:

105 տարիներ առաջ, Մայիս 28-ին, քանդուեցան հայ ազգին հոգու թռիչքը սանձող 6 դարերու ստրկութեան ծանր շղթաները եւ հազարամեայ պատմութեան էջերուն մէջ ոսկետառ արձանագրուեցաւ անոր գերագոյն յաղթանակներէն մէկը:

105 տարիներ առաջ, Մայիս 28-ին, հայ ժողովուրդը որոշեց ապաւինիլ իր միասնական ուժի զօրութեան եւ կերտեց Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

Հրաշքի համազօր հայրենի պետականութեան վերականգնումը ամենամեծ փաստն էր, թէ Հայկի ժողովուրդը չի կրնար բաժնուիլ իր մէջ խարսխուած ազատութեան գաղափարէն:

Այսօր, մինչ արցախցի մեր քոյրերն ու եղբայրները աւելի քան 5 ամիսներ դուրսի աշխարհէն կտրուած, կ'ապրին անորոշութեան ծանր օրեր, կը յիշենք Մայիսի 28-ը եւ աւելի քան երբեք կարիքը կը զգանք Արամ Մանուկեանի ու անոր սերնդակից ռահվիրաներուն, որոնք արհմտով շաղախուած հայրենի հողին ու ազատ ապրելու անսակարկ իրաւունքին սիրոյն պատրաստ էին զոհելու ամենաթանկագինը:

Սակայն ոչինչ, պատմութեան ամենամութեան եւ ամենաճակատագրական պահերուն է, որ կը ծնին այդպիսի խենթեր: Նոր Սարդարապատով, նոր Բաշ Ապարանով ու նոր Ղարաքիլիսէով դարձեալ յարութիւն կ'առնէ փինիկ ժողովուրդը մեր:

Ուստի, այս փառապանծ օրուան առթիւ, ուխտենք երբեք վար չդնել մեզի ժառանգուած գոյութեանական պայքարի բոցավառ ցահը:


Ուխտենք արժանի ըլլալ հայոց պողպատէ կամքի խորհրդանիշ Մայիս 28-ին:

Ուխտենք արժանի ըլլալ ո՛չ մահատենչ այլ մահուան գնով ազատութիւն տենչացող խենթերուն:

### ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

#### ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Աղբալեան ծնած է 24 Մարտ 1875-ին, Թիֆլիսի մէջ: Յաճախած է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը: Երիտասարդ տարիքէն սկսած է զբաղուիլ ուսուցչութեամբ: Կանուխէն մաս կազմած է նաեւ Հ.Յ. Դաշնակցութեան շարքերուն: Անոր կեանքի առաքելութիւնը եղած է հայոց հոգեմտաւոր աշխարհի հայացումը: Տարիներու ընթացքին ստանձնած է Թեհրանի Ազգային վարժարանի տնօրէնութեան, եւ Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթի խմբագրութեան պաշտօնները: 1915-ին զբաղած է արեւմտահայ գաղթականութեան պատսպարման, սնուցման եւ բուժման դժուարին գործերով: 1918-ին ընտրուած է նորանկախ Հայաստանի խորհրդարանի անդամ: Շատ չանցած հիմը դրած է Երեւանի պետական համալսարանին եւ յայտնաբերած Չարենցի նման տաղանդներ: Հայաստանի Խորհրդայնացման ժամանակ՝ Լեւոն Շանթի եւ Համօ Օհանջանեանի պէս դէմքերու հետ բանտարկուած է, ուրկէ ազատած է Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ: Այդպիսով ան անցած է Եգիպտոս, ուր զբաղած է մանկավարժական եւ մշակութային գործունէութեամբ՝ Շանթի եւ Օհանջանեանի հետ միասին հիմնելով Հայ Կրթական եւ Հրատարակչական Համագային Ընկերութիւնը: Ապա հաստատուած է Պէյրութ եւ Լեւոն Շանթի հետ միասին հիմնած՝ Համագայինի Պէյրութի Հայ ճեմարանը: Մինչեւ իր մահը Աղբալեան ծաւալած է հայագիտական եռուն գործունէութիւն: Դասաւանդած է հայ գրականութեան պատմութիւն, գրաբար եւ հայ մատենագիտութիւն: Կազմակերպած է ժողովրդային լսարաններ, որպէսզի տարագիր ու գաղթական հայութեան լայն բազմութիւններուն մէջ սերմանէ հայ մշակոյթին եւ արուեստին պաշտամունքը: Մահացած է 72 տարեկան հասակին՝ Լիբանանի մէջ:




«Ազգը իր հաւաքական գիտակցութեան, իր հոգեւոր մեծութեան հասնում է միայն մտաւորականութեան միջոցով: Նա ազգի ոգեկան ուժերի խտացումն է»:

## ԻՆՉ ՆՈՐՈՒԹԻՒՆ



Կը յիշէք Ալպերթ Յովհաննիսեանը: Ան այն 19-ամեայ երիտասարդ զինուորն էր, որ Արցախեան 44-օրեայ պատերազմին ընթացքին բոլորիս ուշադրութիւնը գրաւեց եւ աշխարհասփիռ հայութեան ուժ ներշնչեց թնդացող հրետանիին հետ լուսանկարուած իր պատկերով: Ան 2020-ի Յունուարին զօրակոչուած էր հայկական բանակ եւ շատ չանցած արժանացած հրետանիի 3-րդ կարգի մասնագէտի եւ հրետանաւորի շքանշաններուն: Ան զոհուեցաւ 2020-ի Հոկտեմբերին, սակայն անոր յիշատակը յաւերժ կ'ապրի մեր բոլորին սրտերուն մէջ: Անմահացած հերոսին մարմինը այժմ կը գտնուի Եռաբլուրի զինուորական պանթէոնին մէջ, ուր նաեւ կը ննջեն մեր ժողովուրդին ազատ ապրելու իրաւունքին սիրոյն զոհուած միւս բոլոր նահատակները:



Երկու շաբաթ առաջ հանրաժանօթ երգիչ Ռազմիկ Ասեան, հրապարակեց շատ գեղեցիկ եւ յուզիչ տեսահոլովակ մը՝ նուիրուած Ալպերթին յիշատակին: Այս վերջինս կը պարունակէ անոր կանուխ ընդհատուած կեանքէն սրտաշարժ պատկերներ եւ 44-օրեայ պատերազմէն կարճ տեսերիզներ: Ասեան նաեւ հրապարակեց շատերուն արդէն ծանօթ «Ղարաբաղ» երգը՝ իր մեկնաբանութեամբ: Մինչ շրջափակուած արցախցի ժողովուրդը դէմ կը դնէ նորանոր խոչընդոտներու, ունկնդրենք այս հայրենասիրական երգերը, մեր սրտերուն մէջ վառ պահենք բոլորն սերն առ հայրենիք եւ միշտ յիշենք այն անձնազոհ նուիրեալները, որոնք իրենց կեանքի գնով պաշտպանեցին մեր հայրենիքի սուրբ հողերը:

## ԿՇԵՌՔ

Մտքի օրոցքից երբ աշխարհ մտայ՝  
Աշխարհում՝ աշխարհ մօր սէրը գտայ...  
Յօնքերս լծակն են իմ նժարի,  
Աչքերս նրա զոյգ թասերն արի,  
Եւ կշռեցի մօրս սէրը սուրբ,  
Որ ինչքան մեծ էր, այնքան խորն ու նուրբ:  
Հիմալայիան իբրեւ կշռաքար դրի՝  
Վեր թռաւ լեռը հետն իր նժարի.  
Ծովերը դրի՝ վեր ելան կրկին,  
Վար քաշեց մօրս սէրը սրբագին.  
Աստղաբոյլերը՝ դրի կշռաքար, \_  
Նորից մայրիկիս սէրը քաշեց վար...  
Քո սէրն, իմ սիրած, քո սէրն էլ դրի՝  
Վեր ու վար արին նժար նժարի...  
Բայց երբ իմ Մասիս-Մայր Հայաստանից  
Մի բուռ հող դրի՝  
Եկաւ համբուրեց նժար նժարի...

Յովհաննէս Շիրազ

## Աղուոր բառեր

**Սրբագին** – սրբութեան համարժէք

**Աստղաբոյլ** – աստղերու խումբ

**Եթերային** – չափազանց նուրբ եւ գեղեցիկ, երկնային

**Սիրայորդ** – առատ եւ բուռն սիրով լեցուած

**Անաղարտ** – անբիծ, մաքուր

**Խարսխուած** – ամրապնդուած, ամուր հաստատուած

**Փառապանծ** – շքեղ, պանծալի

## Ո՛Վ ԵՄ ԵՍ

Առաջին տառս կը գտնուի «արջ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «ջրհոր»-ին:

Երկրորդ տառս կը գտնուի «զանգ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «զանկ»-ին:

Երրորդ տառս կը գտնուի «լար»-ին մէջ,  
բայց ոչ՝ «լուրջ»-ին:

Չորրորդ տառս կը գտնուի «տունկ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «կռունկ»-ին:


Հինգերորդ տառս կը գտնուի «պատ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «պտուղ»-ին:

Վեցերորդ տառս կը գտնուի «շերտ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «շերամ»-ին:

Եօթներորդ տառս կը գտնուի «բերդ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «բարդ»-ին:

Ութերորդ տառս կը գտնուի «նախշ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «շաղախ»-ին:

Իններորդ տառս կը գտնուի «չամիչ»-ին մէջ,  
բայց ոչ՝ «միջատ»-ին:



### 9 Մայիսը Շուշիի ազատագրման և յաղթանակի օրն է

Հայ ժողովուրդին համար պատմական օր է 9 Մայիսը:

8 Մայիս 1992-ին սկսաւ եւ 9 Մայիսին յաղթանակով վերջացաւ հայոց բերդաքաղաք Շուշիի ազատագրումը: Այս յաղթանակը նորանկախ Հայաստանի պատմութեան ամենափառատուր էջերէն մէկն է: 9 Մայիսի առաւօտեան կանուխ ժամերուն Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցիի ակերուած գմբեթին ծածանեցաւ հայոց յաղթական եռագոյնը:

44-օրեայ պատերազմէն ետք, Շուշին անցաւ թշնամիին ձեռքը: Բայց հայ ժողովուրդը յարատեւող է եւ յուսահատիլ չի գիտեր. փաստը այն է, թէ այս տարի 9 Մայիսին, մեծ թիով արցախցիներ Ստեփանակերտի հրապարակին մէջ համախմբուեցան, ուխտելով պահել Արցախը հայկական:

Յարգանք մեր հերոսներուն:

Յիշենք մեր յաղթանակի օրերը: Հաւաքենք մեր ուժերը եւ աշխատինք այնպէս, որ դարձեալ տէրը ըլլանք մեր Շուշիին:

### ԳԱՆՃԱՍԱՐ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



Գանձասար վանական համալիրը կը գտնուի Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գիւղին մօտ, Գանձասար լեռան վրայ:

Այս համալիրի շինութեան աշխատանքները սկսած են 1216 թուականին: Իսկ պաշտօնական բացումը մեծ շուքով կատարուած է 1240-ին: Այդ ժամանակաշրջանին հայ թէ օտարազգի պատմիչներ գովասանքով արտայայտուած են Գանձասարի վանական համալիրի մասին:

17-րդ դարու վերջաւորութեան, Գանձասար համալիրը եղած է մեծ անուն ունեցող պատմամշակութային եւ հոգեւոր կեդրոն: Ինչպէս նաեւ ծանօթ եղած որպէս ազատագրական կեդրոն՝ դառնալով հայրենասէր մարդոց գլխաւոր հաւաքատեղիներէն մէկը: Շարժումը առաջնորդողը եղած է Գանձասարի Եսայի Կաթողիկոսը: Անոր եւ Իսրայէլ Օրիի համախմբման շնորհիւ է, որ կատարուած են Ռուսաստանի հետ բանակցութիւններու առաջին քայլերը:

### ՇՈՒՇԻ

Անահիտ Գաբրիէլեան



Շուշին ինձ համար...  
 Նա... ամէն ինչ է,  
 Արեւի ջինջ է,  
 Աղբիւրի ջուր է,  
 Կրակ ու հուր է...  
 Եւ առանց նրա  
 Ես նախամարդ եմ,  
 Անջուր ալիք եմ,  
 Մանկան պէս անզօր-  
 անհայրենիք եմ:  
 Շուշին ինձ համար  
 Կարօտից ճաքած  
 դրան ճոխն է,  
 Անտառի խորքում  
 Մի գեղեցկուհի  
 միրհաւի ճիչ է...  
 Շուշին իմ տունն է,  
 Իմ գետի հունն է,  
 Այստեղ՝ ես հզօր-  
 ամենազօր եմ:  
 Շուշին իմ խաչն է,  
 Իմ ազգի վրայ  
 Դամոկլեան կախուած  
 սրի փոխարէն  
 Իմ Տիրոջ անցն է...  
 Իմ արծուարունն է,  
 Իմ որդու տունն է:  
 Դարերի փոշին  
 ուսերին առած,  
 Ամպերին յենուած  
 Այս Շուշին նորն է,  
 Նորացող հինն է,  
 Իմ նախապապի  
 Մամռոտ շիրիմն է,  
 Եւ թող աշխարհը  
 Սա լաւ իմանայ  
 Ինչ էլ որ լինի՝  
 ԱՅՍ ՇՈՒՇԻՆ... ԻՄՆ Է:





## ԱՐԾԻԻԸ

Արծիւը հզօր թռչուն է: Ան թռչուններու թագաւորն է:  
 Արծիւը խիզախութեան ու քաջութեան խորհրդանիշն է:  
 Բնութեան մէջ չկայ որեւէ կենդանի, որ արծիւին համար իրական վտանգ կը ներկայացնէ: Միայն մարդն է, որ կրնայ վնասել այս թռչունին:  
 Արծիւը կը թռչի 7-էն 9 քիլոմետր բարձրութեան վրայ:  
 Արծիւի թւին բացուածքը կը հասնի մինչեւ 2,5 մետրի: Ան կրնայ սաւառնիլ (բարձր թռչիլ) մինչեւ 240 քիլոմետր/ժամ արագութեամբ: Իսկ երբ երկինքէն դէպի վար, դէպի իր որսը ուղղուի, անոր արագութիւնը կը հասնի 320 քիլոմետր/ժամի:  
 Արծիւը ունի նաեւ սուր տեսողութիւն: Մէկ նայուածքով ան կրնայ տեսնել 11,5 քառակուսի քիլոմետր մակերես եւ նկատել նապաստակ մը 3 քիլոմետր բարձրութենէն: Աւելին, ան իր խոշոր մագիլներով (ճանկերով, եղունգներով) կրնայ ճանկել եւ իր ճանկերուն մէջ պահել նապաստակէն շատ անելի մեծ կենդանիներ:

### Ո՛Վ Կ՛ՈՒՂԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Մայիս ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 17 Յունիս 2023: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցի անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin  
 Montreal, Canada  
 H4J 1L5

#### 1- 1918 Մայիս 28-ին հայ ժողովուրդը որոշեց ապաւինիլ...

- ա) դրացի երկիրներուն:
- բ) եւրոպական մեծ երկիրներուն:
- գ) իր միասնական ուժի զօրութեան:

#### 2- Ո՞ր թուականին հայեր միացան եւ կերտեցին Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

- ա) 28 Մայիս 1918-ին:
- բ) 9 Մայիս 1992-ին:
- գ) 9 Մայիս 1918-ին:

#### 3- Մեր մեծերէն ո՞վ է ան նշանաւոր դէմքը, որ ստանձնած է Թեհրանի Ազգային վարժարանի տնօրէնութեան եւ Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթի խմբագրութեան պաշտօնները: Իսկ Պէյրութի մէջ, Լեւոն Շանթի հետ միասին հիմնած է Համազգայինի Ճեմարանը:

- ա) Նիկոլ Աղբալեան:
- բ) Համօ Օհանջանեան:
- գ) Եղիշէ Չարենց:

#### 4- Ո՞ր թուականին հայ քաջեր ազատագրեցին Շուշին:

- ա) 28 Մայիս 1918-ին:
- բ) 9 Մայիս 1992-ին:
- գ) 9 Մայիս 1918-ին:

#### 5- Որո՞նք կը պատկանին հետեւեալ տողերը.

«Եւ թող աշխարհը  
 Սա լան իմանայ  
 Ինչ էլ որ լինի՝  
 ԱՅՍ ՇՈՒՇԻՆ .... ԻՄՆ Է»:

- ա) Բանաստեղծուի Սիլվա Կապուտիկեանին:
- բ) Գրող, լրագրող Անահիտ Գաբրիէլեանին:
- գ) Բանաստեղծ Յովհաննէս Շիրազին:

#### 6- Ո՞ր կը գտնուի Գանձասար վանական համալիրը:

- ա) Արցախի Մարտակերտի շրջանի, Վանք գիւղին մօտ:
- բ) Նախիջեանի Ագուլիս քաղաքին մէջ:
- գ) Զաւախքի Ախալքալաք շրջանի, Դիլիսկա գիւղին մօտ:

#### 7- 17-րդ դարու վերջաւորութեան, Գանձասար համալիրը եղած է մեծ անուն ունեցող պատմամշակութային եւ հոգեւոր կեդրոն:

- ա) Ճիշդ:
- բ) Սխալ:

#### 8- Գանձասար համալիրը եղած է նաեւ ազատագրական կեդրոն, որուն առաջնորդողը եղած է ...

- ա) Թադէոս առաքեալի աշակերտը:
- բ) Գանձասարի Եսայի կաթողիկոսը:
- գ) Մուշի Յովհաննէս կաթողիկոսը:

#### 9- Արծիւը ի՞նչ բանի խորհրդանիշն է:

- ա) Արծիւը խիզախութեան ու քաջութեան խորհրդանիշն է:
- բ) Արծիւը սիրոյ խորհրդանիշն է:
- գ) Արծիւը բարութեան խորհրդանիշն է:

#### 10- Ո՞վ է թռչուններու թագաւորը:

- ա) Ծիծեռնակը:
- բ) Բազէն:
- գ) Արծիւը:

#### Ո՞Վ ԵՄ ԵՍ - էջ 2

Պատասխան .- ազատատենչ



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
 Email: sylvia@horizonweekly.ca  
 Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
 Թիւր պատրաստեց Արիանէ Թապաքեան  
 Ձեւայղացք՝ Լորի Խաչերեանի